

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

ՆՈՐԱԴԻԵՏ ԱՐՉԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿԵՐ

Ասողիկ Սմբատ Թօնզրակեցուն յիշում
է «ի Զարեհաւոնդ զեղչէ ի Ծաղկուն գա-
ւառէ», առանց իշխանական ծագում վե-
րապրելու նորան: Մխիթարի տեղեկութիւ-
նը Մագ ազգի բաժանման մասին առան-
ձին նշանակութիւն ունի, որ ցոյց է տա-
լիս, թէ Ուխտանէս իւր յառաջարանի մէջ
խոստացած ծրագիրը վովին ի կատար է
ածել և թէ լրիւ Ուխտանէսը գոյութիւն
ունէր ԺԳ. զարու վերջում, որից օգտուել
է Այրիվանեցին:

գ) Իրեւ ժամանակակից և ականատես
տեղեկութիւն է տալիս Պոռչ իշխանի վի-
ճամփոր տաճարների շինութեան մասին,
ինչպէս և Թանատեաց վանքի շինութեան
և նաւակառեաց տօնի, որով և համեմա-
տարար աւելի ընդգրածակ տեղեկութիւն
ստանում, Մխիթարի կեսնքի և զործու-
նէութեան և յարաբերութեան մասին գէ-
պի Պոռչեանները:

ե) Վեկայաբանութեանս տուած ցու-
ցումներով կողմնակի կերպով կարող ենք
մի թուական ևս աւելացնել Մխիթարի
կենսազրականի վերայ. մեր Խոզզրակեանց
աշխատութեան մէջ⁽¹⁾ ցոյց ենք տուել,
որ Սրկունիք տանում, որ Պոռչեանց
իշխանական դարբանն էր, Ս. Յակով ա-
նունով եկեղեցին շինուած էր 1277 թուին.
Նորա մեացորդ քարերից մէկի վերայ՝ ԺԳ.
ԶիԶ փորագրուած Մխ. Վ. Պ. (Մխիթար վար-
դապետ) ոչ այլ ոք պիտի լինի, բայց եթէ
Մխիթար Այրիվանեցին: Այդ ձեռով է նա
գրում իւր անունը ձառընտրի յիշատա-
կորանների մէջ, ինչպէս և իւր արձանու-
գրութեան. իրեւ Պոռչեանց տան եպիսկո-

(1) Եր. 37 եւ շար. (պատկ. 10) 125: Եվեղեցին
շինուած էր պահուկ եւ ազնիւ բարից, զեղեցիկ
բանդակներով (տ. եւ պատ. 48): Ազնիւ եւ նուրբ
բանդակի մի կառի (Աստուածածին Յիսուս զրիին)
վերաբաղրութիւնը չնոր տուլ մեր զրի մէջ, որ
նուրբ ճաշակի եւ արտեստագլամի կարողութեան ա-
պացոյց էր:

պոս կենդանի մասնակցութիւն էր ունեցել
թանատի վանքի շինութեան և նաւակու-
տեաց տօնի կատարման մէջ. Նման մաս-
նակցութիւն պիտի ունենար մերձակայոց
Սրկունիքի շինարարութեան, որ կատար-
ուած է ընդգամէնը մի տարի առաջ կամ
հէնց նոյն ժամանակները, և իւր մասնակ-
ցութիւնն էլ արձանագրած իւր յատակ
խաչի տակ: Այժմ աւելի հասկնալի է դաս-
նում, թէ ինչու նո իւր Պատրոն Պոռչ իշ-
խանին աշխարհաշնոր մականունն է առ-
լիս⁽¹⁾:

Բայց այս զրական կողմերի հետ ունի
և պակասութիւններ. իրեւ շարագրութիւն
ամբողջութիւն չէ կազմում, քաղուածք լի-
նելով զանազան ազրիւներից՝ ինչպէս Դե-
ւոնդն է, Ուխտանէսը, Սամուէլ Կամբջա-
ձորեցին, Սամուէլ Անեցին, Վարդոն, Ս-
տեանոս Սիւնեցու թարգմանութիւնների
յիշատակարաններ, մեղ ծանօթ և անծա-
նօթ վկայաբանական ազրիւններ, այլ եր-
բեմի հակասական և կցկառւը, ինչպէս Ուխ-
տական արտասահմանց վերազարձի, Գուի-
նի նորոգութիւնների և Վարց Գեորգ Գ-ի
արշաւանքի պատմութիւններն են: Անի և
բացարձակ սխաններ, որ հասկնալի չէ թէ
ո՞րտեղից է առել, ինչպէս ոմն Ազարոս պո-
պի յիշատակութիւն, որպէս թէ ժամանա-
կակից Լեռն կայսեր՝ կամ Փլավիանոս կ.
Պոռչոյ պատրիարքի յիշատակութիւն՝ հա-
յոց ծԶ թուականին, չիշելով առասպե-
լախան տարրերը վկայաբանութեան մէջ,
որ զայթակղութիւն չէր ժամանակակից
մտածողութեան համար:

Ամփոփելով մեր տեղեկութիւնները՝
Այրիվանեցու կեանքի մասին կը ստանանք
հետեւել թուականները.

ա. Իւր Ճայունատիրը գրել է Յակո-
բեցիցու, Հայոց Լեռն և Վարց Գեմիարէ
թագաւորների օրով, այսինքն 1272-1286
թ. թ., հաւանօրէն աւելի վերջին տարի-
ները:

բ. Հայոց ԶիԶ թուականին, ամենայն
հաւանականութեամբ, մասնակից էր և
ներկայ՝ Սրկունիքաց Ս. Յակոբի շինութեան
և նաւակառեաց տօնին:

գ. Ներկայ էր Զիէ (ԶիԲ) թուականին
թանատեաց վանքի շինութեան վերջաւո-

(1) Պատմ. Հայոց, ճրատ. Էմինի. եր. 68:

բարեկան և նուռակատեաց առնին, երբ դը-
րեց այս վկայաբանութիւնը:

զ. ԶԼ.Զ թուականին իւր պրած Գան-
ձերի ժողովածուն է կազմել Պեղարգայ
վայքում:

ե. ԶԼ.Բ թուին շինել է իւր առաջնու-
թեան քարայրը և արձանագրութիւնը քան-
դակել առուել:

զ. Նոյն թուականին պէտք է վերջա-
ւորած լինի և իւր Ժամանակագրութիւնը՝
նշանակելով կենի մահը և Հեթումի թա-
գաւորութեան սկիզբը:

Դ. Մահուան թուականը մօտաւորա-
պէս նշանակելուց առաջ պէտք է բանա-
սիրական մի քանի խնդիր պարզել: Մխի-
թարի Ժամանակագրութեան կամինի հրա-
տարակութեան մէջ Հեթումի թագաւորու-
թեան հետեւմ է. աելե սաստիկ հացա-
թանգութիւն (մահ?) մարդոյ և անասնոյ⁽¹⁾
և ապա վերջարանը: Հացաթանգութեան
տարին ԶԼ.Բ թուականն էր, երբ սմոթ ցոր-
հանն ԲՃՄ դրամ բարձրացաւ⁽²⁾, Հեթու-
մի գուհակալութիւնից տաս տարի յետոյ.
եթէ ճիշգ է այս շատ հուռանական ենթա-
գրութիւնը, ապա զարմանալի է, որ Մխի-
թարը այդ տաս տարուայ համար ոչինչ չէ
նշանակել, մինչդեռ Ժամանակը հարուստ
էր քաղաքական և կրօնական անցուգար-
ձուլ:

Աեւի ևս անհասկնալի է այդ լուս-
թիւնը, երբ ի նկատի ունենանք որ սիշ-
խանք կիլիկցուց հատուածի վերջում՝
Հեթումի անուան զիմաց նշանակուած է
ամեն, զուցէ և եղել «Փէշ», որ նորու թա-
գաւորութեան լրիւ տարիները կը լինէին:
Բայց սորանով չեն վերջանում միք տա-
րակոյները: Ժամանակագրութեան կար-
գում յիշած վերջին կաթուղիկոն է «Կո-
միտաս», որի աթուակալութիւնը նշանա-
կուած է Արդունի գահակալութեան և Դե-
մետրէի սպանութեան մէջ, այսինքն 1084-
1289 թւերի. Կոմիտաս անունով կաթու-
ղիկոս չունինք այդ ժամանակ, այլ կոս-
տանդին, զրչի պարզ սխալ պէտք է հա-

մարել անունների այդպիսի շփոթութիւնը:
Աւրիմն Ժամանակադրութիւնը վերջանում
է կոստանդինի կաթուղիկոսութեամբ: Մինչ-
դեռ ակամուղիկոսք Հայոց հատուածի մէջ
յիշուած են նաև Ստեփանոսի և Անա-
ւորգեցու անունները, վերջինի կաթուղի-
կոսութիւնը նշանակելով ԶԼ.Ա թուին, որ
անկարսի կը լինէր Այրիվանեցու կողմից.
որովհեաւ այդ թուականին միայն կատար-
ուած է Հառմէլլայի առումը, և մի տարի յի-
առ Ստեփանոսի մահը⁽¹⁾: Ժամանակակից-
ների տուած տեղեկութեամբ ԶԼ.Բ թուին
Անաւարզեցին զեսես հպիսկոպոս էր⁽²⁾:
Այս ըստ Էսթեան տարակոյնների վերայ
աւելանում են և Ժամանակագրութեան
հետ կապված արտաքին ձեւեկան գժուա-
րութիւններ, «Կոմիտողիկոսք Հայոց» վերնո-
րով հատուածը պէտք է վերջանար. «Տէր
կոստանդինի հօթանասներորդերորդ կաթո-
ղիկոս խօսքերով, ինչպէս միւս հատուած-
ների վերջում տալիս է ցանկի մէջ յիշուած-
ների լնդհանուր թիւը և հատուածը փա-
կում. Նոյնն է կատարել և այսակդ. մինչ-
դեռ աւելացած է յիշոյ ևս վերուիշեալ
երկու կաթուղիկոսների անուններ: Իսկ
Ալիշանի տեսած օրինակի մէջ նաև սը-
րանց երկու յաջորդները մինչև ԶԼ.Յ թը-
ւականը⁽³⁾: Նման երեսյթ նկատում է և
վրաց իշխանների և թագաւորների ցանկի
մէջ, վերջին խօսքերը պիտի լինէին. «Դե-
մետրէ սպանեալ. ՀԹ. իշխանք և թագաւ-
որք», բայց յիշոյ աւելացած են նաև եր-
կու անուններ, Դաւիթ և Վախթանկ:
Այս բոլոր զժուարութիւնները վերանում
են և հասկանալի դառնուում, եթէ լնդուննք,
որ նրանք օտար ձեռքի յաւելումներ են
և ոչ Մխիթարի:

Պատմական ուրիշ տուեալներ ևս ցոյց
են տալիս, որ Մխիթար ԶԼ.Բ (= 129!) թը-
ւականից յիշոյ չպէտք է երկար տպրած
լինի: Յայտնի է որ 1295/6 թուին Ստե-
փանոս Օրբէլեանցի զլմաւորութեամբ զու-
մարուել է Անաւարզեցու դէմ արեւելան
եպիսկոպոսների ժողովը, որոնց անունը
յիշուած է ձեւնարկի տակ: Ժողովին մաս-
նակից էին Օրբէլեան իշխանների հետ և

(1) Եր. 69:

(2) Սամուել Անեցի. հրատ. Տէր Միհրելեանի.
շար. Եր. 155. «ԱՅԱ ի 2ԽԸ. թվին էր Պարու Հայոց
կոստանդին, և ի սոյն ամի եղեւ սով սաստիկ՝ և
մոթ ցորեանն ԲՃՄ դրամ:»

(1) Սրուանձտեան, Թորոս Աղբար. Բ. 436. եւ
Օրբ. 503:

(2) Լայտիեան. Ցուցակ Վասպ. Եր. 114:

(3) Այրարատ. 35:

Խաղբակեանները՝ Պոռչի որդին Պատուք և
սրա եղբօրորդին էաչի. մասնակից էին
Խողբակենց հովանաւորութիւնը վայելող
Գլածորի գարոցի երկու նշանաւոր վարդա-
պիտները՝ Դուիթ և Եսայի Նշեցի, մերձա-
կոյ Հաւուց թաոի Մխիթար հոգիսկառուը,
և չյիշուած Մխիթար Այրիվանեցու անու-
նը, որ անկարելի կը լինէր, ևթէ Կո կին-
զանի լինէր։ Մնում է նորո մահը ընդու-
նել ԶԼՇ-ԶՒ թուականներին, մօտաւորա-
պէս 70 տարեկան հասակում, քանի որ
ԶԼՇ թուականին 67 ամեայ էր։

Մի ձեռագրի մէջ (Էջմ. Շ. 13/84, 282ր) սվարդապիտաց վախճանիլն ու վերնագրով հատուածի մէջ նշանակուած է սվարդանե-
ցաւ սր. վզպէն։ Մխիթար Այրիվանեցին ի թվականիս մերոյ ԶԾԶ. փետրվարի ժ.», բայց դա պարզ չփոխութիւն է նոյնանուն երկու վարդապիտների։ նշանակուած թը-
ւականին մեռնողը Մխիթար Ասանեցին է։ Ասրու մահը Մկրտիչ Մեծովիցին նշանա-
կում է նոյն թուականի հոսի իլ. ուր-
բաթ օր, իսկ Դանիէլ Մեծովիցին նոյն
թուականի հոսի իլ. յաւուր չարեքչար-
թի⁽¹⁾։ Այս ժամանակագրութեան հատ-
ուածի հեղինակը, որ ժԴ. դարի վերջին
քառորդից տասջ տարել չէր կարող, մի-
ջինն է ընտրել, այսինքն փետրուարի ժ.։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊ. ՅՈՎՈՒՔԵԱՆՑ
Շարունակելի

Զ Բ Ո Ս Ա Ն Փ

Մալեր եղբայր մ'ունէր, ունի դէմ զայ բացե
էր. «Խ՛չ, քառ օր մը մարդ մը, այսան մեծաւուց
անձեռու մէջ զա՞ս»։ — «Առ»։ նես կ'ուզեի որ զա
ունենայի, պատասխանեց Մալեր, Թուեհին և Խոս-
կոքին նետ. բա՛ն մը չունիմ անոնց նես բաժնուելիք։

*

Զօրակար մը կ'ըսէր իր զինուուներան. «Եւր յա-
ռաջ խիզախեմ նետեւեցէ. եւր փափչիմ՝ սպանեցէ. եւր մեռնիմ՝ վեհս լուծեցէ»։

(1) Տես մեր Մխիթար Ասանեցի, Արարատ. 1899,
իսկեւ առանձին տեսքականվ. Վաղարշ. եր. 26.

ԿՐԵԱԿԱՆԻ ԿԱՐՈՒՅՈՒՆՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱՀԱՍԱՏԱԹԻՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԹՈՒԱԱՅԻ
ԶԵՄՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՕՆՈՒՄԸ

(Անդինական մասնաւոր բղակցութիւն)

ՊՅԱՏՐՈՎՏԱՐԹԻՒՆ ԵՒ ՃԱՄՑՎԱՈՒՄԸ

Հայ Եկեղեցին պատրիարքական եւ
կաթողիկոսական չորս Աթոռներուն վերա-
կազմութեան չրջանին մէջ կ'ապրինք։

Նկատելի իրողութիւն է որ ամէնէն
աւելի արկածեալ Աթոռը ամէնէն աւելի
առաջ՝ իր օրինական դոյցավճակը վերա-
կանգնելու կը փութայ։

Նախախնամական տարր մը կայ այս
եկեղեցեանց մէջ, այլապէս զիւրին չէ
բացատրել թէ ինչպէս 15 տարիներէ ի վեր
վանք, միաբանութիւն, կալուածներ, ե-
կամուաներ և թեմական ժողովուրդին հետ
անոնց եկեղեցիները, զպրցները և կայքն
ու զոյքը կորսնցուցած, ու տասանորդեալ իր
հօտին հետ՝ աքսորական ու աստանդական
ՅՅամեայ կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսը, ոչ
միայն քաջողջ և առոյց, ցայսօր կարող
եղած է կաթողիկոսական պաշտօնի ընթա-
ցիկ գործերը վարեկ՝ կանալի կորովով,
այլ մանաւանդ վերջին երեք տարիներէ ի
վեր աննկուն հաստատամտութեամբ ու հայ-
րապետագայել կանխահնգութիւնով՝ կը ճգնի
մէծ պատերազմէն վերջ քազաքական յայ-
անի պատճանակներով գողցես պատմական
ստուերի և պաշտելի մշատակի մը վերած-
ուելու վիճակին մէջ զրուած իր գարաւոր
այլ վանադեալ Աթոռը զբացի ասպանջա-
կան հոգին վրայ վերահաստատելու բացո-
րուց նպատակով։

Ն. Ս. Օծութիւնը իր պետական մակա-
րեալ պրակար 1928-ին սկիզբը Ազգին ու-
շազրութեան ներկայացուց Կիլիկեան Աթո-
ռին պահպանման անհրաժեշտութիւնը։ Հայ-
կական սփիւռքին ամէն կողմերէն եկեղե-
ցին ու Ազգին հարազատ զաւակներէն ըն-
դունած համամտութեան զիրերուն վրայ
իր յառաջացեալ տարիքին համեմատելով
Արյական կոչուելու արժանի նախաձեռնու-